Եղիշե Չարենց

Երկիր Նաիրի

8

Մասն երրորդ և վերջին

ԵՐԿԻՐԸ ՆԱԻՐԻ

Միթե սա՞ է երկիրը Նաիրի...

Ե. Չ. «ՇՈԳԵԳԱԼՈՒՍ»

Մենք արդեն անցնում ենք մեր սույն այս վեպի կարեւորագույն մասին - եւ այստեղ է ահա, սիրելի ընթերցո՛ղ, որ, ինչպես ասում են՝ իր ամբողջ հասակով կանգնում է մեր առաջ մեր առաջադրած հիմնական խնդիրը, թե ո՞րն է, վերջապես, երկիրը Նաիրի: Սույն այս վեպիս առաջաբանում, հիշո՞ւմ ես, ես հարցրել էի սրտմտությամբ, կասկածով հարցրել էր սիրտս, թե, գուցե, մշուշ է նա, Նաիրին, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն... Եվ ճիշտ որ,- ո՞րն է այդ Նաիրին: Ինչո՞ւ համար եմ սույն այս վեպիս ամեն մի էջում իմ նկարագրած քաղաքը անվանում «նաիրյան» քաղաք, եւ մարդկանց, որ ապրում են այդ քաղաքում- «նաիրցիներ»: Մի՞թե կարող է «ուղեղային մորմոքը» կերպավորվել եւ իրականություն դառնալ. մի՞թե կարող էր, սիրելի ընթերցո՛ղ, միս եւ մարմին ստանալ «սրտի հիվանդությունը», - եւ քայլել քաղաքում, հասկանո՞ւմ ես, ո՛չ թե ուղեղում կամ սրտում, այլ իրական քաղաքում, որպես մի թեկուզ հենց, ասենք, Գեներալ Ալոշ, կամ Մեռելի Ենոք, կամ, լավագույն դեպքում- որպես մի Համո

Համբարձումովիչ- Մազութի Համո... Իհարկե ոչ, կասե ամեն մի խելքը գլխին անձնավորություն- չէր կարող: Զառանցանք չէր այդ քաղաքը, եւ ոչ էլ նրանում ապրողներն էին զառանցանք. եւ, այո՛, ես ամենայն վճռականությամբ կարող եմ ասել, որ ոչ ոք էլ դրանցից իրեն չէր համարում «նաիրցի», եւ ոչ էլ այդ քաղաքը, ուր ապրում էր ինքը- «նաիրյան» մի քաղաք: Ուրեմն ե՞ս եմ հնարել այդ լեգենդը, սիրելի ընթերցո՛ղ, որ մոլորեցնեմ մարդկանց դատարկ զրույցներով, գուցե ե՞ս եմ հնարել, որպես թուղթ մրոտող, անբան մի բանաստեղծ, որին եւս «քամի թոցնող» պիտի անվաներ վարսավիր Վասիլը, եթե այս գրությունս կարդար: Այո՛: Ի՞նչ «Նաիրի»: Եվ ամենից առաջ. ո՞րտեղից մեյդան ընկավ այդ անունը. ի՞նչ է նա նշանակում:

Սիրելի ընթերցո՛ղ: Ես չեմ հնարել այդ անունը եւ պարզապես չգիտեմ, թե ի՞նչ է նա նշանակում: Գուցե «Նաիրի» նշանակում է ցնորք. ո՞վ իմանա: Գուցե նշանակում է՝ «անքաշ պանիր»- աստված ինքը գիտե: Կամ, գուցե, «Նաիրի» այն գարին է նշանակում, որ տեսել է երկարականջ քեռին իր այն նշանավոր երազում: Չգիտեմ: Եվ ի՞նչ նշանակություն ունի վերջապես, թե ի՞նչ է նշանակում «Նաիրի»: «Նաիրին» Նաիրի է- պրծավ գնաց: Պայմանավորվենք միայն, որ դա, մի շարք այլ բաներ նշանակելուց բացի, մի երկրի անուն է, ինչպես Սողոմոնը- մարդու եւ... Եվ նորից- խոչընդոտ, սիրելի ընթերցող:- Ո՞րտեղ է, ո՞րն է այդ երկիրը- կարող ես հարցնել դու հիմա,- եւ ես նորից կարող եմ մնալ քիթս կախ, այսինքն՝ շվարած: Շվարած ո՛չ թե այն պատճառով, որ չգիտեմ այդ երկրի տեղը, այլ այն հասարակ պատճառով, որ իմ հավաքած պատմական եւ աշխարհագրական ստույգ տեղեկությանց նայելով- այդ երկիրը շատ քիչ է նման գոյություն ունեցող այլ երկրներին, ասենք- Արգենտինային, Չիլիին, Տաճկաստանին, Ռուսաստանին, կամ թեկուզ Հաբեշստանին կամ Ալբանիային... Քիչ է նման ո՛չ թե իր աշխարհագրական դիրքով, բնակիչների կազմով, պետական սիստեմով եւ այլն, այլ... Հենց այս «այլումն» է բանը, սիրելի ընթերցող: Այս «այլն» է ահա, որ ձեռնթափ է անում ինձ, քարից քար խփում, խայտառակում: Բանն այն է, որ այդ «երկիրը», այդ չարաբաստիկ «Նաիրին», ինչպես բանաստեղծներն են հաճախ ասում իրենց գերերկրային սիրուհիների մասին- «եւ կա, եւ չկա»: Կա, իհարկե, կա, եթե ոչ ինչպե՞ս պիտի ապրեին «չեղյալ» այդ երկրում մի շարք այնպիսի պատկառելի մարդիկ, ինչպիսիք են նույն Գեներալ Ալոշը, Օսեփ Նարիմանովը, Քոռ Արութը, պ. Մարուքեն,- ո՞րը

թվեմ: Մարդիկ, որոնց երկրային գոյությունը, ինչպես տեսնում եք, ոչ մի դեպքում չի կարելի, իհարկե, կասկածի ենթարկել: Եվ, միեւնույն ժամանակ, չկա, որովհետեւ... եթե նա լիներ- ապա ուրեմն ինչո՞ւ նա պիտի անվանվեր «Նաիրի»- այսինքն՝ կրեր մի անուն, որ դուք չեք գտնի այսօր եւ ոչ մի աշխարհագրական քարտեզի վրա: Փորձեցե՛ք մի նամակ գրել եւ հասցեագրել այսպես՝

«Երկիր Նաիրի- Գեներալ Ալոշին» - տեսեք ո՞ւր կհասնի.- Կարծո՞ւմ եք՝ մեր նկարագրած քաղա՞քը: Սխալվո՛ւմ եք: Ուրեմն ճանապարհի՞ն կմնա:- Երեւակայեցեք, որ ո՛չ: Եվ այստեղ է ահա հարցի ամբողջ գաղտնիքը, սիրելի ընթերցող: Ձեր այդպես հասցեագրած նամակը կգա եւ կընկնի ուղիղ- ի՞նչ եք կարծում՝ Կա՞րս, Երեւա՞ն, Դիարբեքի՞ր, Շապին-Գարահիսա՞ր... Իհարկե, ոչ:

Այդ նամակը կգա ու կընկնի ուղիղ մեր ամենածանոթ Համո Համբարձումովիչ Ասատուրովի- Մազութի Համոյի... ուղեղը... Ահա՛ եւ ամբողջը: Եվ ահա՛ թե ինչու, վեպի շարունակությանն անցնելով, մենք պետք է դիմենք հնում մանավանդ շատ ընդունված գրական մի պրիոմի, որից այնքան խուսափում են արդի հեղինակները: Ռենտգենյան ճառագայթի նման մենք պիտի ձգտենք թափանցել սույն այս վեպի կենտրոնական անձնավորությանց ուղեղները,- առաջին հերթին, իհարկե, Համո Համբարձումովիչ Ասատուրովի- Մազութի Համոյի ուղեղը: Այո՛:- Ամենից առաջ Մազութի Համոյի, որովհետեւ նա էր (ուղեղը եւ ոչ թե Մազութի Համոն), որ, տարիներ շարունակ բոլոր համանման ուղեղների կատարյալ կատարելատիպը լինելով՝ որպես առասպելական այն ցուլը, կրում էր իր ուղեղե եղջյուրների վրա... երկիրը Նաիրի: Նրան, այո՛- Համո Համբարձումովիչ Ասատուրովի- Մազութի Համոյի ուղեղին մենք պիտի դիմենք, եթե ուզում ենք իսկական աղբյուրից հանել մեր այնքան ցանկացյալ ջուրը,- եթե ուզում ենք իսկական ակունքից խմել կենարար հեղուկը մեր հավաքական, կամ իրա՝ Մազութի Համոյի տերմինոլոգիայով ասած՝ «ազգային գոյության»:

Այդ հանճարեղագույն ուղեղն ուներ հանճարեղագույն հատկություններ:- Ամենից առաջ՝ մի՞թե հանճարեղագույն հատկություն չպիտի համարել այն զարմանալի հանգամանքը, որ նա, այդ ուղեղը, Մազութի Համոյի այդ տարօրինակ ուղեղը տարիներ, դարեր շարունակ, հնամենի հնուց, կրում էր իր վերոհիշյալ եղջյուրների վրա մի ամբողջ երկիր, եւ այն էլ այնպիսի մի տիեզերական երկիր,

ինչպիսին էր երկիրը Նաիրի: Հասկանո՞ւմ եք՝ նրա, այդ «Լույսի» կառավարիչ Համո Համբարձումովիչի այդ գերերկրային ուղեղում, ինչպես մեր եղկ երկրագնդի որեւէ հատվածի վրա, տեղավորված կային- գյուղեր ու քաղաքներ. ապրում էին մարդիկ այդ գյուղերում ու քաղաքներում. ապրում էին- ամենից առաջ հենց ինքը՝ Մազութի Համոն, ապա Գեներալ Ալոշը, բժիշկը, Օսեփ Նարիմանովը, Անգինա Բարսեղովնան եւ հազար-հազարավոր ուրիշ-ուրիշները. ազատ, քայլում էին ուղեղային քաղաքներում, գնում էին գործի եւ վերադառնում էին գործից, ուտում էին եւ արտաքնոց էին գնում.- մի խոսքով՝ անում էին այն ամենը, ինչ որ կապված է մարդկային կյանքին, ինչով որ կենդանի է այդ կյանքը: Այդ նրանց թվում էր միայն, որ իրենք, ասենք, քայլում են Լորիս-Մելիքյանով. էապես նրանք ոչ այլ ինչ էին անում, քան եթերային տատանումներ առաջ բերելը Մազութի Համոյի տիեզերապարփակ ուղեղում. կամ Մազութի Համոյի ուղեղից սահած դեպի Լորիս-Մելիքյանը՝ մրսում էին այնտեղ դարերի խայտառակությանը գամած, ստվերային մի կյանք: Եվ ո՛չ միայն նրանք, այլեւ հազար-հազարավոր ուրիշ-ուրիշները. պ. Աբոմարշը, մանրավաճառ Կոլոպոտյանը, Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը, Կլուբի Մեյմունը, Քոռ Արութը, բոլորը, բոլորը,- եւ ամենից առաջ մեր սույն այս վեպում այնքան մանրամասն նկարագրած բոլոր քաղաքացիք, նրանց կենցաղը, գործնական եռուզեռը, առտնին առօրյան. մի խոսքով ասած՝ ամենքը եւ ամեն ինչ նաիրյան այդ քաղաքում ոչ այլ ինչ էր գուցե, եթե ոչ Մազութի Համոյի տիեզերապարփակ ուղեղի եղկ արտացոլումը, ուղեղային մորմոքը միայն- ուղեղային խաղը: Եվ մի՞թե նրա, Մազութի Համոյի հանճարեղագույն ուղեղը չէ՞ր ծնել այդ քաղաքն իր բոլոր հրաշքներով եւ հրաշալիքներով, ինչպես ելել էր հնում հունական Զեւսի աստվածային գլխից իմաստության ու գեղեցկության գերագույն դիցուհին՝ Աթենաս-Պալլասը: Այո՛: Այլապես ո՞նց, որտեղի՞ց պիտի ելնեին եւ քարակերտ վեհությամբ ապրեին դարեր- թեկուզ հենց Վարդանի կամուրջը, բերդը, Առաքելոց եկեղեցին... Այդպես էլ ես ու դո՛ւ, ընթերցող. մեզ համար քայլել ենք շարունակ փողոցից փողոց, մտել ենք վարսավիր Վասիլի վարսավիրանոցը եւ Տելեֆոն Սեթոյի սրճարան-ճաշարանը, որի ցուցանակի վրա գրված է՝ «Չայ-Ղահվե- Ճաշարան, Սեթրակ Ֆալիան»- ապրել ենք, մի խոսքով, իբր թե երկրային աշխարհաբնակ կյանքով, եւ չենք էլ իմացել, որ իլլյուզիա է այդ բոլորը, ուղեղային մորմոք,- որ այդ ամենը ոչ թե առասպելական մի ինչ-որ խղճուկ Մայայի շղարշն է մեր աչքերի վրա, այլ այդ ամենաասվորական

«Լույսի» կառավարիչ Մազութի Համոյի, այդ Համո Համբարձումովիչ Ասատուրովի ուղեղային մշուշը- որ մեր ամբողջ կյանքն իր «տակով-վրայով» ոչ այլ ինչ է եղել, եթե ոչ ճիշտ որ- «ուղեղային մորմոք»- սրտի հիվանդություն... Այո՛: Մազութի Համոյի հանճարեղագույն ուղեղի զառանցանքն էր այդ քաղաքն իր «տակով-վրայով»- եւ մենք, սիրելի ընթերցող, տարիներ շարունակ ապրել ենք Մազութի Համոյի ուղեղից սահած այդ զառանցանք - քաղաքում, ապրել ենք զառանցանքում, որպես «մեր տանը»- եւ մենք այդ չենք իմացել, գլխի չենք ընկել, չենք գիտակցել: Եվ դո՛ւ, ընթերցո՛ղ, ավելի քան սխալված կլինես, եթե կարծես, որ սույն իմ այս պոեմանման վեպում ես ցանկություն եմ ունեցել նկարագրել իրապես գոյություն ունեցող մի քաղաք, պատկերել այդ քաղաքի երկրային բնակիչներին, վեր հանել ինչ-որ չտեսնված «տիպեր»:- Այդպիսի բաներ ես երբեք էլ չեմ մտածել, ընթերցո՛ղ, եւ չէի էլ կարող մտածել: Իսկ ինչ վերաբերում է այն, առաջին հայացքից կարծես թե ինձ մատնող հանգամանքին, որ ես քանիցս, սկզբից եւեթ, խոսել եմ այդ քաղաքի եւ նրա բնակիչների մասին, որպես շատ սովորական, միանգամայն հաստատ գոյությանց մասին,- ինչ վերաբերում է դրան, սիրելի ընթերցո՛ղ, ես այստեղ հարկադրված եմ ասել, բացեիբաց խոստովանել, որ ես խաբել եմ քեզ, յուղել եմ գլուխդ, ինչպես խաբել է ինձ տարիներ շարունակ Մազութի Համոն, ինչպես խաբել է եւ քեզ, միեւնույն է՝ ապրել ես դու թե ոչ մեր նկարագրած քաղաքում. խաբել է, մշուշ է փռել աչքերիդ- չես իմացել: Այո՛, ընթերցո՛ղ, զառանցանք էր այդ քաղաքը, ուղեղային մորմոք- եւ կար, գոյություն ուներ, թվում էր, թե ապրում է երկրային- քանի կար, կենդանի էր դեռ Մազութի Համոն, քանի փռում էր դեռ օրերի եւ տարիների վրա իր ուղեղային շղարշը Համո Համբարձումովիչ Ասատուրովը- Մազութի Համոն: Էլ ի՞նչ «տիպեր» կամ «հերոսներ»- եւ ես էլ չգիտեմ, թե էլ ի՞նչ զահրումար... Նրան, միայն նրա՛ն, այսինքն՝ ո՛չ թե Մազութի Համոյին, այլ նրա հանճարեղագույն ուղեղին էր, այո՛, պարտական նաիրյան այդ քաղաքն իր երկրային գոյությամբ- եւ առանց նրա, այսինքն՝ ոչ թե Մազութի Համոյի, այլ նրա ուղեղի, չէր կարող գոյություն ունենալ, անգամ մի երկվայրկյան ապրել ոչ միայն նաիրյան այդ քաղաքը, այլեւ ամբողջապես հենց ինքը- երկիրը Նաիրի: Չե՞ս հավատում: Նայի՛ր շուրջդ ապա. ո՞ւր է մեր նկարագրած քաղաքը. ո՞ւր են նրա բնակիչները: Ո՞ւր են Մեռելի Ենոքը եւ Տելեֆոն Սեթոն... Ո՞ւր են, ո՞ւր են, վերջապես, Վարդանի կամուրջը եւ Առաքելոց եկեղեցին... Չկան, ծուխ են դարձել, ցնդել են մշուշում. դարձել են մուժ ու հիշատակ: Ինչո՞ւ:- Որովհետեւ չկան, այլեւս ցնդել է

մշուշում Մազութի Համոյի ուղեղը.- չկա. մուժ է դարձել. դարձել է մշուշ ու հիշատակ:

Իսկապես որ հանճարեղ կարողություններ ուներ այդ ուղեղը, զորավոր կարողություններ: Բավական են, կարծեմ, վերեւում ասածներս միայն, որպեսզի հասկացողություն կազմի այդ հանճարեղագույն ուղեղի կարողության մասին. բայց արեք տեսեք, որ ես ամենակարեւորը եւ ամենազարմանալին դեռ չեմ հիշատակել, ամենաաներեւակայելին: Մենք ասացինք, որ այդ զարմանալի ուղեղի վրա էր կանգնած երկիրը Նաիրի, որպես հնում աշխարհն՝ առասպելական այն ցուլի եղջյուրների վրա. բայց ինչի՞ վրա էր կանգնած ինքը, այդ ուղեղը- ահա՛ ամենաէականը: Ինչո՞վ էր սնվում հենց ինքը, ինչո՞վ էր կենդանի այդ ուղեղն ինքը- ահա՛ հարցը: Եվ այս հարցին է ահա, որ մենք հարկադրված ենք տալ մի ամենաանսպասելի պատասխան, ամենաաներեւակայելին:-

- Նա, Համո Համբարձումովիչի այդ զարմանալի ուղեղը կանգնած էր- երեւակայո՞ւմ եք- հենց ինքն իր վրա... Ուրիշ ոչինչ: Չե՞ս հավատում.- իրենի՛ց հարցրու. այսպես էր հավատացնում ինձ ինքը, այսպես էր համոզված Վառոդյանը,- ավելին՝ այսպես էր համոզված եւ ամբողջ «Ընկերությունը».- օ, սա ամբողջ մի փիլիսոփայություն էր, սիրելի ընթերցող,- ամբո՛ղջ մի, եթե կարելի է այսպես ասել՝ տիեզերական ուղեղասիստեմ... Կանգնած էր, ու բա՛ստա, պրծավ գնաց. ուզում ես՝ զարմացիր, ուզում ես՝ հիացիր: Կար, գոյություն ուներ եւ սնվում էր- հենց ինքն իրենով- ահա՛ թե ինչ: Կար, գոյություն ուներ եւ աշխատում էր, անխոնջ ու մշտնջենական, ինչպես ինքը բնությունը, կամ, ավելի լավ է ասել՝ որպես մի իսկական «պերպետուում - մոբիլե». գերմանական հայտնի գիտնական Հելմհոլցի նշանավոր թեորիան միանգամայն ժխտելով՝ ապացուցում էր իր կենդանի օրինակով, որ նման մի ինքնաշարժ մեքենա ո՛չ միայն հնարավոր է սկզբունքորեն, այլեւ կա, գոյություն ունի եւ կարող է աշխատել՝ ինքն իրեն սնելով դարեր ու դարեր, մահանալ ու կյանք առնել նորից իր սեփական աճյունից, որպես եգիպտական մի ֆենիքս-թռչուն: Այսպիսի՛ ահա ինքնասնույց մի թռչուն, բայց ավելի լավ է ասել՝ «պերպետուում-մոբիլե» էր Համո Համբարձումովիչի ուղեղը. ինքնաշարժ մեքենա, որ, ինչպես ասացինք, ինքն իրեն սնելով, դուրս էր թողնում, հանում էր շրջանառության անսպառ

քանակությամբ- ո՛նց ասենք... նո՛ւ, ազգային եռանդ (էներգիա), որով, եւ միմիայն որով, կանգուն էր դեռ, չէր հավասարվել հողին, Ասորիքի կամ Բաբելոնի նման, երկիրը հնամյա- հազարամյա Նաիրին: Կարծում ենք, որ հենց նրա, Համո Համբարձումովիչի պերպետուում մոբիլանման այդ ուղեղն էր ահա աչքի առաջ ունեցել մեր սիրելի, այնքան վաղաժամ մահացած պոետը՝ սույն տողերը գրելիս.

«Եգիպտական բուրգերը փոշի կըդառնան՝ Արեւի պես, երկի՛ր իմ, կվառվես վառման...»: Այսպես ենք կարծում, ընթերցո՛ղ, եւ մենք հիմք ունենք այսպես կարծելու, որովհետեւ նույնը, ճիշտ նույնը, բառացի նո՛ւյնն էր մտածում եւ ինքը, նույն ինքը Մազութի Համոն, որին մենք վեպիս երկրորդ մասի վերջում կայարանում կանգնած թողինք՝ հայացքը նաիրյան հեռուն, ուր հեռացավ գնացքը՝ «նաիրյան ուժերով» բեռնավոր: Հենց նույն այդ դառն ու ազնվական, տխուր եւ ժպտաթախիծ զգացմունքն էր տիրում Համո Համբարձումովիչի սրտում, երբ նա, վայրկյանի լրջությունից ազդված, կայարանից քաղաք էր վերադառնում՝ ոչ թե, ինչպես կարելի է կարծել, ընկ. Վառոդյանի ուղեկցությամբ, այլ մենակ, մեն-մենակ, տխուր ու մտախոհ՝ սեփական, այսինքն՝ «Լույսի» տեղական գրասենյակին պատկանող կառքում ընկողմանած:

Մենակ, մտախոհ, տխուր ու ժպտաթախիծ զգացմունքներով լեցուն՝ Մազութի Համոն կայարանից վերադառնում էր քաղաք: Եվ կայարանից մինչեւ բնակարանը նրա, Մազութի Համոյի աչքերը նույն այն ժպտաթախիծ արտահայտությունն ունեին, ինչպիսին, ինչպես հիշում է ընթերցողը վեպիս երկրորդ մասի վերջից՝ ունեին նրանք (Համո Համբարձումովիչի աչքերը) կայարանում: Այդ աչքերի ներսում դեռ գնացքն էր, այդ աչքերի ներսում դեռ հեռուն էր գնացքի՝ սահմանի այն կողմը.- Համո Համբարձումովիչի աչքերը չէին տեսնում Լորիս-Մելիքյանի, այդ չարչիական փողոցի ցածլիկ խանութները: Համո Համբարձումովիչի աչքերում, աչքերի ներսում, նա՛ էր, ըղձալին ու երազյալը,- երկիրը Նաիրի: Գնում էր. փողոցի փոսերից, քարերից ելեւէջելով, գնում էր կառքը «Լույսի» գրասենյակի: Համո Համբարձումովիչն ընկողմանել էր՝ կիսահուշ: Օրորվում էր, Համո Համբարձումովիչի նստուկի նման, կառքի ցնցումներից վեր ու վար ելեւէջելով, օրորվում էր Համո Համբարձումովիչի ուղեղում- երկիրը Նաիրի: Շինվում էր. Համո Համբարձումովիչի նստուկի նման՝ նստման կետ էր փնտրում, տանելի գոյավիճակ- Համո Համբարձումովիչի

ուղեղում երկիրը Նաիրի: Փնտրում էր, բայց չէր գտնում. օրորվում էր, ինչպես աշխարհը երբեմն առասպելական այն ցուլի եղջյուրների վրա. օրորվում էր, ելեւէջում էր անհանգիստ, ելք էր փնտրում.- Համո Համբարձումովիչի ուղեղից սահելով՝ դեպի երկրայինը, դեպի գոյացման հեռուներն էր ձգտում, դեպի սահմանի այն կողմը- երկիրը Նաիրի: Մտածում էր՝ «Ո՞րն է Նաիրին»,- ու շինվում էր ուղեղում, ելնում էր դարերի մշուշից, հառնում էր Համո Համբարձումովիչի ուղեղից, որ նորից իրականանա- ո՞ւր, որտե՞ղ սակայն- ո՞ր ափերում... կանգնում էին. դարերի մշուշից, զառանցանքից ելած, շինվում էին Մազութի Համոյի ուղեղում- քաղաքներ ու ոստաններ. ելնում էին Վանը, Բիթլիսը, Մուշը, Էրզրումը, Սվազը, Դիարբեքիրը- վեց վիլայեթ: Նաիրին էր. հին ու հազարամյա. հառնում էր, կյանք էր առնում, շինվում էր Համո Համբարձումովիչի ուղեղում՝ դեպի գալիքի զառանցանքն էր ձգվում: Մի հանգամանք սակայն ստեղծագործական այդ նվիրական ժամին մնում էր անորոշ. մնում էր, ավելի լավ է ասել, անուշադիր.- Համո Համբարձումովիչի ուղեղի տեսողության դաշտից կարծես դուրս էր մնում, կարծես թյուրիմացաբար հաշվի չէր առնվում- մի խոշորագույն հանգամանք- եթե միայն «հանգամանք» կարելի լինի համարել մեր նկարագրած քաղաքը, որում ապրում էր հենց ինքը, Մազութի Համոն: Նման էր, եթե անպատվաբեր չէ այսպիսի համեմատությունը, Նասր-Էդդին հոճայի հայտնի առակին. Մոլլա Նասր-Էդդինի նման Համո Համբարձումովիչը մոռացել էր կամ մոռանում էր հաշվել... իրեն, կամ- իր նստած երկարականջ քեռուն, այսինքն՝ նաիրյան այդ քաղաքը... Հասկանո՞ւմ եք՝ կյանքի ու մահու այդ ճակատագրական ժամին Համո Համբարձումովիչի տիեզերապարփակ ուղեղը կարծես մոռացել էր ամենաէականը- մոռացել էր այն, ինչ, ինչպես ասում են՝ իր, Համո Համբարձումովիչի, քթի տակ էր գտնվում: Գուցե եւ չէր մոռացել, բայց... Բայց փաստը մնում էր փաստ. եւ այդ փաստն այն էր, որ՝ Համո Համբարձումովիչի ուղեղում, ուր շինվում էր, ելնում էր տարիների փոշուց ու ձգվում էր դեպի երկրայինը, դեպի աշխարհի երկրային հեռուն, երկիրը Նաիրի,- այդ ճակատագրական ժամին բացակայում էր ո՛չ միայն այդ քաղաքը, ուր առաջին հերթին ապրում էր հենց ինքը, Մազութի Համոն- այլեւ ամբողջ սահմանի այս կողմը. պատկերացնո՞ւմ եք՝ ամբողջ սահմանի այս կողմը, կարծես, ջնջել էր չարաբաստիկ մի ձեռք Համո Համբարձումովիչի տիեզերաշեն ուղեղից: Եվ Համո Համբարձումովիչը- ոչի՛նչ. չէր անհանգստանում: Չնայած, հասկանո՞ւմ եք, բերդին, չնայած Վարդանի կամուրջին եւ Առաքելոց եկեղեցուն,

չնայած հին ու հնամենի բոլոր այդ նաիրյան հրաշալիքներին- Համո Համբարձումովիչի տիեզերաշեն ուղեղը մի տարօրինակ համառությամբ անտես էր առնում, ասես համարում էր չեղյալ սահմանի այս կողմը.- օ՛, գիտեր, հասկանում էր Մազութի Համոն, որ այստեղ չէ, որ իր հանճարեղագույն ուղեղից սահելով պիտի միս ու մարմին առներ, կերպավորվեր հաստատ, գոյանար երկրային- երկիրը Նաիրի...

. . . . . Թող չկարծվի սակայն, որ Համո Համբարձումովիչը միամտաբար էր այդպես մտածում: Ո՛չ.- այդպես մտածելու համար Համո Համբարձումովիչի ուղեղը, ի՛նչ խոսք, որ ուներ հարգելի պատճառներ. նման պատճառները փոլիտիկոսների բարբառում կոչվում են՝ քաղաքական պատճառներ...

. . . . . Բայց եւ այնպես, ընթերցո՛ղ,- ո՞վ իմանա:

Մի՞թե հասկանում է արեւը, որ ինքը կենտրոն է մի ամբողջ համաստեղության. կարծում եմ, որ սխալված չպիտի լինեմ, եթե ասեմ, որ ոչ: Այսպես էլ Համո Համբարձումովիչի ուղեղը եւ հենց ինքը, Մազութի Համոն- ի՞նչ իմանար: Եվ այն էլ- ճակատագրական այն օրը: Ասում ենք ճակատագրական, որովհետեւ այդ օրը, ի բացառյալ բոլոր վերոհիշյալ դեպքերը- Համո Համբարձումովիչի կյանքում, ավելի լավ է ասել՝ Մազութի Համոյի ուղեղում կատարվեց եւ մի այլ, ավելի քան նշանակալից, գեր-ճակատագրական- դե՞պք ասեմ, չգիտեմ, թե- անսպասելի մի տիեզերացնցում, որի հետեւանքով տարօրինակ մի տեղափոխություն կատարեց Համո Համբարձումովիչի ուղեղում... երկիրը Նաիրի: Բայց այս մասին արդեն հարկավոր է մանրամասն խոսել:

Համո Համբարձումովիչը ինչպես ասացինք, կայարանից վերադառնում էր տուն: Ուղեղում- դե ե՞րբ էր Համո Համբարձումովիչի ուղեղն իրը եղել, ուղեղում, կրկնում ենք վերջին անգամ,- նաիրյանն էր, հավիտենականը. ուղեղի մշտնջենական եղջյուրների վրա օրորվում էր, ծանր,- երկիրը Նաիրի: Այդպես էլ հասավ իր բնակարանը. եւ անցավ իր առանձնասենյակը. առանձնասենյակում նստած էր իր անզուգական դուստրը- Սեւաչյա Պրիմադոննան: Սեւաչյա Պրիմադոննան արտասվում էր՝ գլուխը ձեռքերի մեջ առած՝ արմունկները գրասեղանին: Մոտեցավ. գրկեց դստեր գլուխը Մազութի Համոն. ուղեղում

նաիրյանն էր դեռ եւ ոչ անձնականը. ուղեղի եղջյուրների վրա դեռ նստած էր, ծանր, երկիրը Նաիրի: Մոտեցավ. ձեռքը, բնազդաբար, իջավ ցնցվող ուսին Սեւաչյա Պրիմադոննայի. Սեւաչյա Պրիմադոննան խոսելու փոխարեն արցունքոտ ցուցամատով ցույց տվեց մոր ննջարանը Մազութի Համոյին:- «Գնա՛ այնտեղ»,- ասաց արցունքոտ ցուցամատը Մազութի Համոյին: Համո Համբարձումովիչը կարծես զգաց, հասկացավ կարծես Մազութի Համոն քստմնելի մի բան. ուղեղում, ուղեղի եղջյուրների վրա, երերաց, անհանգիստ, երկիրը Նաիրի: Համո Համբարձումովիչը զգույշ, ինչպես գողը, մոտեցավ Անգինա Բարսեղովնայի ննջարանին: Կռացավ, բանալիի ծակից ներս նայեց, Անգինա Բարսեղովնայի ննջարանը, Մազութի Համոն. օրորվեց, ուղեղի եղջյուրների վրա թպրտաց անհանգիստ երկիրը Նաիրի... Օրորվեց, թպրտաց անհանգիստ.- Նաիրի երկիրը, ցատկելով ուղեղի եղջյուրների վրայից, ցատկելով ուղեղից- նստեց Համո Համբարձումովիչի ականջներից բուսած... պոզերի վրա: Եվ այդ տարօրինակ- երկար, հոր ականջներից ընտանեբար բուսած պոզերի արանքից, Մազութի Համոյին գաղտագողի մոտեցած, նրա հետեւը շնչասպառ կռացած, Սեւաչյա Պրիմադոննան տեսավ... մազերը, կոնակը եւ սպիտակ նստուկը քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի), որին, նկարչական մի շքեղ կոնտրաստ կազմելով, քնքուշ փաթաթվել էին պոնձագույն սրունքներն Անգինա Բարսեղովնայի՝ իրա, Սեւաչյա Պրիմադոննայի, մոր- Համո Համբարձումովիչի անզուգական կողակցի ...

. . . . . Այո՛: Ո՞րն էր- «Նաիրին»...

Նա այնտեղ էր- Համո Համբարձումովիչի ուղեղա-ընտանեկան եղջյուրներին... ներողություն՝ պոզերին նստած. սնում էր, սնում էր նրան Համո Համբարձումովիչի ուղեղը, որպես մի իրականացած «պերպետուում-մոբիլե». գերմանական հայտնի գիտնական Հելմհոլցի նշանավոր թեորիան հերքելով՝ անհատնում եռանդ, իրա տերմինոլոգիայով ասած, ազգային էներգիա էր մատակարարում իրեն ու ամենքին: Բայց այստեղ հարկավոր է արդեն, ինչպես ասում են՝ «փակագծերը բանալ»: Հարկավոր է ասել, որ «Համո Համբարձումովիչի ուղեղ» ասելով պետք է մոտավորապես այն հասկանալ (մենք մոտավորապես այն ենք հասկանում), ինչ որ հասկանում են իդեալիստ փիլիսոփաներից ոմանք «ես» ասելով.- «տիեզերական հոգի»- տվյալ դեպքում, իհարկե, նաիրյան մասշտաբով:

Իհարկե, Մազութի Համոյի ուղեղն էապես մի մասնիկն էր միայն Կենտրոնաուղեղասարդի, նաիրյան այդ «տիեզերական հոգու», որ շուտով, շուտով, իր դիալեկտիկական զարգացման սինթեզին հասնելով՝ պիտի իրականանար օրերում ու տարիներում, որպես հազարամյա նաիրա-արքայություն: Նրա, այդ «տիեզերական հոգու» (նաիրյան մասշտաբով) գերագույն սուբստանցիան էր- Ընկերությունը, այսինքն՝ Կենտրոնաուղեղասարդը, եւ այդ «տիեզերական հոգու» (նաիրյան մասշտաբով) մի մասնիկն էր ահա Համո Համբարձումովիչի ուղեղը՝ տեղական սուբստանցիան:- Եվ այդտե՛ղ էր ահա Նաիրին, Համո Համբարձումովիչի այդ հանճարեղագույն ուղեղում: Այդտեղ էր. շինվում էր այդտեղ:- Լրացել էին օրերն ու ժամանակները. ուղեղայինն արդեն երկրայինի պիտի փոխվեր. ուղեղայինը պիտի իրականանար:

Եվ այդ իրականացումը, ինչպես տեսանք, սկսվեց բավականին տարօրինակ, սկսվեց... արմատից: Առաջին հերթին, ինչպես տեսանք, արմատը, այսինքն՝ Համո Համբարձումովիչի ուղեղային եղջյուրները, այնքան անսպասելի կերպով, փոխվեցին- ընտանեկան ամենասովորական... պոզերի: Բայց- «Ո՞վ չունի»,- մտածեց Համո Համբարձումովիչը, մտաբերելով Արամ Անտոնիչին, գավառապետին իրան,- հազար-հազարին: Մի ժամ չանցած՝ մոռացավ, չեղյալ համարեց այդ ամենը Համո Համբարձումովիչը. տեղ չկար ուղեղում անձնականի համար. ուղեղում տիեզերականն էր, նաիրյանը: Քնեց. կամքի երկաթե ձեռքով սրբեց ուղեղից անհաճո միջադեպը. երազում- գնացքն էր նաիրյան ուժերով բեռնավոր.- երազում թռչում էր գնացքը... անկարելի հեռուն: Բայց հաջորդ առավոտ, երբ դուրս եկավ տնից Համո Համբարձումովիչը եւ, կառք նստելով, ուզում էր «Լույսի» գրասենյակը գնալ- անսպասելի կերպով կառքը չշարժվեց, ձիերը, քարացած նիոբեների նման, տեղերում մնացին: «Ի՞նչ կա»,- հարցրեց Համո Համբարձումովիչն անհանգըստացած. եւ դեռ չէր լսել կառապանի փնթփնթոցը, երբ նրա, Համո Համբարձումովիչի ուղեղից սահելով խուժեցին փողոցը, կանգնեցին իրականացած... Համո Համբարձումովիչի ուղեղաընտանեկան եղջերապոզերը. փողոցի մայթերից ձգվեցին դեպի ինքը- կենդանի եղջյուրներ, բազմագլուխ պոզեր: Եվ ահա՝ հազիվ էր գլուխը դուրս երկարել կառքից- շրջապատեցին, լեզու առան հանկարծ այդ մարմնավորված եղջյուրները,- ներողություն՝ պոզերը: «Աղա՜ա՜, մզի տե՜-ե՜-ե՜ղ, մզի խա՜-ա՜-ա՜ց,

մզի խա՛-ա՛-ա՛ց, մը՛-զի՛ - խա՛-ա՛-ա՛-ա՛-ա՛ց...»,- խոսեցին բազմաձայն ու բազմագլուխ, կենդանի եղջյուրները, այսինքն՝ պոզերը: «Ո՞րտեղից եք»,- մեքենայաբար հարցրեց Համո Համբարձումովիչը, բնազդորեն երեւի, գլխի ընկնելով, որ ինչ-որ առնչություն պետք է լինի դրանց եւ իրա, այսինքն՝ Համո Համբարձումովիչի, ուղեղաընտանեկան եղջերապոզերի մեջ: «Ո՞րտեղից եք»,- հարցրեց Մազութի Համոն:

«Բա՛-սե՛-նա՛, Բա՛-սե՛-նա՛-սե նա՛»,- խոսեցին, հազարբերան ասին, խուժեցին ուղեղը:- «Գաղթական են, սահմանեն են փախե»,- պարզաբանեց կառապանը Մազութի Համոյին. խոնվեց. խառնվեցին իրար. ուղեղից սահելով ետ՝ նորից Համո Համբարձումովիչի ուղեղը խուժեցին եղջյուրներն ու պոզերը. ուղեղում, հաստատ ու մարմնավոր, Նաիրին էր արդեն- երկրայինը.- կառք, կառապան, բարձրահասակ սպա, Անգինա Բարսեղովնայի պղնձագույն սրունքները- գաղթականներ... Բասեն:

Ձեռքը քաշում էր կառապանի թեւից: Կառքի մեջ- հասակովը մեկ կանգնած- արդեն «Լույսի» գրասենյակն էր գնում Համո Համբարձումովիչը.- ուղեղից ելնելով, արդեն դիմավորում էր նրան գրասենյակի դռներում ընկ. Վառոդյանը՝ փափախավոր...

. . . . . Երկուշաբթի էր. հազար ինը հարյուր տասնչորս թվականի դեկտեմբերը:

Եվ այստեղից է ահա, որ կարծես Մազութի Համոյի ուղեղից սահելով, կերպավորվելով աշխարհում, որպես Մազութի Համոյի ուղեղից ելած առտնին զառանցանք՝ գլորվեցին օրերը տխուր ու աղետաբեր. գլորվեցին եւ իրականացան 1914, 15, 16 թվականները- ելան, տեսիլանման, հանճարեղագույն այդ ուղեղից եւ իրականացան այնտեղ, սահմանի այն կողմը, այնտեղ, ուր պիտի հառներ տարիների մուժից երկիրը Նաիրի, այնտեղ, ուր հեռացավ գնացքը՝ «նաիրյան ուժերով» բեռնավոր:- Իրականացան այդ տարիները դաժան ու անկարելի, այնտեղ- Վանում, Բիթլիսում, Մուշում, Դիարբեքիրում,- այնտեղ- Էրզրումում, Սվազում, Երզնկայում,- այնտեղ- Գարահիսարում... Անապատում ելած միրաժի նման՝ ելավ- գետնահարվեց, վերջին պատրանքով շրջավորված հնամյա երազը, գետնահարվեց- արդյո՞ք ընդմիշտ... Ու մնացին- դիեր, դիեր,

դիեր,- առտնին զառանցանք: Ու մնացին- ավերակներ: Ու մնաց... Մազութի Համոն՝ նաիրյան այդ քաղաքում կանգնած կենդանի Նաիրի, որպես հավիտենական պերպետուում մոբիլե, որ, ինքն իրեն սնելով, անսպառ քանակությամբ «ազգային եռանդ» է հղանում, շնչավորելով հավիտենացածը՝ մի՞թե անկարելին... Եվ բազում դեպքեր ու պատմություններ եղան մեր նկարագրած քաղաքում, բայց այդ բոլորը մենք թողնում ենք մի կողմ. թողնում ենք... դարերին: Գլորվեցին, ինչպես ասացինք, 1914, 15, 16 թվականները, դատարկվեց ու ամայացավ այդ մռայլ տարիներում երկիրը Նաիրի,- բայց, ինչպես հայտնի է քեզ, ընթերցող, պատահեց այնպես, որ «ռուսը» կամ, ինչպես մեր նկարագրած քաղաքի բնակիչներն էին ասում՝ «սոխը» գրավեց երազյալ վայրերը, հասավ, իհարկե հասավ, Էրզրում, բայց ոչ թե «յոթը» օրում, ինչպես Մազութի Համոն էր գուշակում, այլ անհամեմատ ավելի երկար ժամանակամիջոցում: Բայց միթե ա՞յս է հարցը, ընթերցո՛ղ:- Օ, ոչ. իհարկե ոչ: Գոռշի արժեք չուներ այդ հարցը մի ինչ-որ քաղաք գրավելու ժամանակամիջոցը սխալ գուշակելու խնդիրը, Մազութի Համոյի համար.- զինվորական չէր Մազութի Համոն եւ ոչ էլ ստրատեգ, այնպես որ նրա հաշիվներում պատահած այդ փոքրիկ սխալը, այդ ինքնին չնչին հանգամանքը, ապացուցում էր ամենից առաջ իրեն, Մազութի Համոյին, եւ ապա «Ընկերության» բոլոր մնացած անդամներին, որ «աղետների» հարցում միանգամայն անմեղ է ինքը, Մազութի Համոն, ինչպես եւ «Ընկերությունը»: Եվ ճի՛շտ որ. ինչո՞ւ հնարավոր չէր Էրզրումի գրավումը «յոթ» օրից. ո՞վ էր խանգարողը: Ո՞վ կար դեմը կեցած, ի՞նչ զորավոր ուժ. ռազմի ի՞նչ կարողություն... Ծիծաղելի էր, դառը ծիծաղ էր հարուցում ինչպես Մազութի Համոյի իրա, այնպես էլ «Ընկերության» մյուս ազդեցիկ անդամների, սրտում այդ անհասկանալի անհեթեթությունը: Հասկանո՞ւմ եք. Սոխը, տասնչորս միլիոնանոց բանակ ունեցող այդ տիեզերակալ Արջը, չէր կարող լողձուկ մի քաղաք վերցնել յոթ օրվա ընթացքում... Եվ սա այն ժամանակ, երբ դեմը կեցողը- Զառամյալն էր, Հավիտենական Հիվանդը, Մահամերձը... Թափթփուկ հորդաներով կեցել էր զորավոր Սոխի հանդեպ, անգամ ջարդում էր ու քշում, սրի ու հրի էր մատնում երկիրը Նաիրի եւ ոչինչ. կարծես չէր էլ անհանգստանում Սոխը, եւ չէր էլ վրդովվում... գրավոր խոստումներ տվող Բարձրագույն Ինստանցիան... Մի բան կար թաքնված այս ամենի ետեւը, եւ Մազութի Համոն ավելի քան հասկանում էր այդ բանը. հասկանում էր, իհարկե, եւ «Ընկերությունը», բայց՝ ինչո՞վ, ինչո՞վ էր

մեղավոր Մազութի Համոն, ինչո՞վ էր մեղավոր «Ընկերությունը»: Եկան, աշխարհի չորս կողմից հավաքվեցին նաիրցի ռազմիկները. արին, ինչ որ կարող էին անել. ավելի՛ն արին. իրենց մայրերի ու զավակների հավելյալ արյունը բերին ի նվեր նենգավոր Սոխի փրկարար առաջխաղացումին. եւ ի՞նչ.- ստոր, նենգ, գետնաքարշ դավաճանությունն էր հատուցումը՝ ավերված Նաիրին... Իսկ ա՞յն, որ, լպիրշ ու լրբաբար վախկոտ-վախկոտներ, թալանչիներ ու ավազակներ հայտարարվեցին նաիրցի ռազմիկները, եւ այդ ստոր սոխերի կողմից խայտառակության սյանը գամվեցին ամբողջ աշխարհի առաջ- ի տրիտուր այն մեծ ու հերոսական օգնության, որ հասցրին նաիրյան ռազմիկները սոխերի ոչխարային բանակին... Ամոթ էր, լկտի դավաճանություն- սոխերի կողմից, իսկ «Ընկերության» եւ նաիրյան բանակի կողմից- հերոսական պայքար, ազատաշունչ գոյամարտ, օրհասական կռիվ: Ո՞վ, ո՞վ վերցրեց Վանը, եթե ոչ՝ Նաիրյան բանակը. ո՞վ վերցրեց նույն

Էրզրումը... «Սրիկանե՛ր, լրբե՛ր, դավաճաննե՛ր»,- փրփուրը շրթունքներին որոտում էր հաճախ, ձեռքը սեղանին խփելով, Տեղական Կոմիտեի նիստերին Մազութի Համոն. «Ո՛չ. էլ ես սոխասեր չեմ, էլ չեմ կարող հանդուրժել դրանց այդ լկտի վերաբերմունքը»,- գոռում էր, փրփուրը բերանին, Մազութի Համոն,- եւ ապա գնում էր գավառապետի բնակարանը, ուր հանգստանում էր մի քիչ, հանգստացնում էր ջղերը Ագրիպպինա Վլադիսլավովնայի, իր անգին կողակից Անգինա Բարսեղովնայի, քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) եւ իր անզուգական դստեր՝ Սեւաչյա Պրիմադոննայի հետ՝ «դուռաչկի» խաղալով:

Չէր վհատում.- Կենտրոնաուղեղասարդի ուղեղատատանումներին ենթակա ու հլու՝ օրերի լրացմանն ու արյան հատուցմանն էր սպասում Համո Համբարձումովիչի ուղեղը. սպասում էր, որ համաշխարհային պատերազմը վերջանա եւ հաշտության սեղանին նստեն ազգերն ու ժողովուրդները. գիտեր, համոզված էր նա, որ այն ժամանակ արդեն կիրականանա երազյալը, կկատարվի անխուսափելին, կթոչի, անգոյության գիրկը կգլորվի Հավիտենական Հիվանդը, եւ նրա դիակի վրա, նրա նեխած մարմնի քայքայումից ելնելով՝ կկանգնի պայծառ ու երկրային- երկիրը Նաիրի: Այսպես էր մտածում, այսպես էր հավատացած Համո Համբարձումովիչը, բայց անցավ 1916-ը, եկավ 1917-ը եւ, երեւակայո՞ւմ եք, պատահեց անսպասելին, կատարվեց- անսպասելին,

կատարվեց- հանկարծ...

Այդ անսպասելին, Համո Համբարձումովիչի - Մազութի Համոյի համար այդ հանկարծակի պատահածը, որ շարժեց տեղից, շփոթ ու իրարանցում մտցրեց ոչ միայն Համո Համբարձումովիչի, այլեւ ամբողջ «Ընկերության» կենտրոնաուղեղում- Ռուսական Հեղափոխությունն էր, հազար ինը հարյուր տասնյոթ թվականի փետրվարը...

Այստեղից է ահա, որ մենք պիտի անցնենք մեր նկարագրած քաղաքի վերջին դեպքերի պատմությանը:

Սկսվեց նրանից, որ մի օր, միանգամայն անսպասելի կերպով, քաղաքի փողոցներում երեւաց, զինվորականի շորերով եւ չսափրած, բորբսնած դեմքով, վեպիս երկրորդ մասից մեզ արդեն բավականին ծանոթ Կարո Դարայանը. ճիշտ այնպես, ինչպես առաջին անգամ իր հայրենի քաղաքը գալիս, եկավ ու իջավ- ուղիղ պ. Մարուքեի բնակարանը: Եվ ահա, նրա գալուց ընդամենը մի օր հետո, ցերեկվա ժամը մոտավորապես 11-ին, հանկարծ փակեց «Լույսի» գրասենյակը Համո Համբարձումովիչը. հապշտապ, եւ այն էլ ոչ թե կառքով, այլ- չտեսնված երեւույթ- ոտքով տուն եկավ Մազութի Համոն ու փակվեց իր առանձնասենյակում, հրամայելով ծառային, որ բոլոր իրեն հարցնողներին, բացի ընկ. Վառոդյանից եւ բժշկից, հայտնի, որ ինքը տանը չէ: Մինչեւ երեկո այդ օրն իր առանձնասենյակում մնաց Մազութի Համոն: Վարագույրները քաշել էր ու նստել կիսախավարում. լուռ էր. գլուխը ցավում էր մի քիչ. ուղեղում... պարապություն էր այդ օրը՝ անգո մի մշուշ, բաց տարածություն: Կտրվել էին կարծես օրերն ու տարիները. հատվել էր ինչ-որ բան Համո Համբարձումովիչի ուղեղում. այդ օրն ուղեղում, ինչպես ասացինք, մշուշ էր թափանցիկ- բաց տարածություն: Բայց այդ տարածությունը երբեմն-երբեմն սկսվում էր լցվել. կարծես քնած էր արթմնի ու, արթմնի երազում, տեսնում էր տեսիլներ. տեսնում էր.-

- թեքվել էր Ագրիպպինա Վլադիսլավովնան իր վրա ու քնքո՛ւշ-քնքո՛ւշ կկոցում էր, ինչպես մի անմեղ աղավնի... Նայում էր աչքերին. Ագրիպպինա Վլադիսլավովնայի աչքերում եւս մշուշ էր թափանցիկ, բաց տարածություն... Ագրիպպինա Վլադիսլավովնան թվում էր փոքրի՛կ-փոքրի՛կ. մանկական կարմիր շրթունքներով համբուրում էր Համո Համբարձումովիչի սառը

շրթունքներն Ագրիպպինա Վլադիսլավովնան: Նայում էր, անթարթ նայում էր Ագրիպպինա Վլադիսլավովնայի աչքերին Համո Համբարձումովիչն ու նկատեց. Ագրիպպինա Վլադիսլավովնայի աչքերի բաց տարածությունն սկսեց լցվել, լցվել, իմաստավորվել, իմաստ ստանալ:- «Չե՞ս ճանաչում»,- հարցնում էր բաց տարածությունն Ագրիպպինա Վլադիսլավովնայի աչքերից Համո Համբարձումովիչին. Համո Համբարձումովիչը նայեց-նայեց- ու վեր թռավ տեղից. երազից արթնացողի նման ձեռքով շփեց ճակատը Համո Համբարձումովիչը. նայեց՝ թեքվել էր վրան- իր անգուգական դուստրը՝ Սեւաչյա Պրիմադոննան. նայում էր աչքերին: Աչքերում- մշուշ էր անգո՝ բաց տարածություն:- «Ի՞նչ կա»,- հարցրեց Համո Համբարձումովիչն անհանգստացած. Սեւաչյա Պրիմադոննան հառեց աչքերը գետնին. հետո արագ-արագ, կարծես դաս ասելիս լիներ, խոսեց. Համո Համբարձումովիչն իր դստեր կարկտի պես թափվող խոսքերից միայն այն հասկացավ, որ ինքն իսկույն պետք է գնա գավառապետի բնակարանը: Վեր կացավ Համո Համբարձումովիչը, հագավ վերարկուն, վերցրեց ձեռնափայտը. գնաց: Արդեն մութն էր, երեկոյան ժամն արդեն 10-ը կլիներ, երբ Համո Համբարձումովիչը մտավ գավառապետի բնակարանը: Մարտի 2-ն էր. 1917 թվի մարտի 2-ը:

Թե ինչ էր խոսվել այդ երեկո գավառապետի բնակարանում- աստված ինքը գիտե, բայց մի քանի օր անց պ. Մարուքեն ասում էր, որ այդ երեկո գավառապետի մոտ են եղել, բացի Համո Համբարձումովիչից, նաեւ բժիշկը, Օսեփ Նարիմանովը, Գեներալ Ալոշը եւ դպրոցի տեսուչը- Արամ Անտոնիչը: Բայց մենք, այդ առթիվ ստույգ տեղեկություններ չունենալով, հարցը թողնում ենք բաց. հարցի տեղ թողնում ենք- բաց տարածություն. թող լցնի, ում երեւակայությունն ինչով որ կամենա, այդ բաց տարածությունը: Մենք ենթադրություններ չենք ուզում անել: Եվ, վերջ ի վերջո, ի՞նչ նշանակություն ունի, թե ո՞վ է ներկա եղել այդ երեկո գավառապետի եւ Համո Համբարձումովիչի զրույցին.- էականն այդ չէ, ընթերցո՛ղ, այլ այն, թե ո՞ւր են գնացել այդ երեկո գավառապետի բնակարանից ելնելով, Համո Համբարձումովիչը եւ բժիշկը.- ահա՛ հարցը:- Եվ այս հարցի շուրջն էր ահա, որ մի քանի օր անց քաղաքում պտտվել սկսեցին զանազան հետաքրքիր զրույցներ. հետաքրքիր թեկուզ այն պատճառով, որ այդ զրույցները կապված էին- երեւակայո՞ւմ եք- «մութ տեղի» հետ, այսինքն՝ Հինգհարկանի Շենքի ներքեւի հարկի ամենածայրը, անկյունում

գտնվող այն փոքրիկ սենյակի, որ ընկ. Վառոդյանի կռնակի վրա- ինչպես հիշում է ընթերցողը վեպիս առաջին մասից- թողել էր... հետաքրքիր հետքեր: Խոսում էին, որ այս զրույցները տարածում է պ. Մարուքեն. նույնիսկ ասում էին, որ այս զրույցները տարածելու մեջ նույնպես մատ ունի- երեւակայո՞ւմ եք- ինքն ընկ. Վառոդյանը. բայց այս երկրորդ հանգամանքը հետագայում միանգամայն հերքվեց եւ զրպարտության ամբողջ մեղադրանքը մնաց Կարո Դարայանի խղճին, Կարո Դարայանի, որ արդեն դիակ էր, կորցված մութ մի գիշեր, ընկած- ո՞վ գիտե, թե ո՞ւր... Մութ, խորհրդավոր պատմություն էր այդ, ընթերցող, որ այնպես էլ մութ մնաց ու մնաց խորհրդավոր.- բայց այդ մասին հետո:

Հաջորդ օրը, մարտի 3-ին, առավոտյան ժամը 8-ը դեռ հազիվ կլիներ, երբ բերդից հանկարծ, քաղաքացիների համար միանգամայն անսպասելի կերպով, դեպի քաղաք շարժվել սկսեցին- զորքեր, զորքեր, զորքեր. շարժվեցին թնդանոթներով ու գնդացիրներով. լցրին փողոցները: Սարսափած՝ խանութներն իրար հետեւից փակել սկսեցին Լորիս-Մելիքյանի խանութպանները. բանն այն է, որ նրանք ոչ մի տեղեկություն չունենալուց բացի՝ այդ անսպասելի շարժման, այդ իրարանցումի մեջ չէին տեսնում նման դեպքերում քաղաքի էշը ցեխից հանող Մազութի Համոյին, ոչ էլ մյուս պատկառելի նախիրցիներից որեւէ մեկին. գիտեին, լսել էին, որ ինչ-որ բան պատահել է ներսերում, բայց այդ մասին վախենում էին խոսել.- իրենց գործը չէր: Երեք օր էր արդեն, որ պտտվում էին շշուկները, բայց քաղաքացիք, մանավանդ Լորիս-Մելիքյանի խանութպանները, թերահավատ էին դեպի նման շշուկները. թերահավատ ու կասկածոտ: Թերթեր երրորդ օրն էլ չէր ստացվում: Չէին ստացվում անգամ նախիրատառ «Մշակն» ու «Հորիզոնը». ասում էին, որ գավառապետը մարդ է կանգնեցրել կայարանում եւ ձերբակալում է բոլոր ստացված թերթերը. ասում էր- պ. Մարուքեն: Այնպես որ կատարյալ անգիտության մեջ էր քաղաքը դեռ, երբ այդ առավոտ, բերդից շարժվել սկսեցին- զորքեր, զորքեր, զորքեր. գնդացիր ու թնդանոթ: Ինչպես ասացինք՝ փակվեցին խանութները, որ նոր էին բացվել. խանութպաններից որը տուն գնաց, որը հենց էնպես կանգնեց իր փակ խանութի փակ դռան առջեւը, որն էլ Տելեֆոն Սեթոյի սրճարանը գնաց՝ լուրեր ստանալու: Տելեֆոն Սեթոյի սրճարանը գնացողների մեջ էր եւ Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը, անգլիախոս գորգավաճառը:- «Հը՞, բան մը կհասկընա՞ք սա ղալաբալըղեն»,- հեգնախառն հարցրեց Հաջի Օնիկ էֆենդին՝ սրճարանը մտնելով.- «Ընչի՞ չենք հասկընա օր»,- կտրուկ պատասխանեց

Տելեֆոն Սեթոն.- «զորքին պրիկազ է էկե, օր ռեալյուց էնեն»,- վերջացրեց Սեթոն, ու տիրեց լռություն. հեռվից, գավառապետի բնակարանի կողմից, լսվեց մի հազարբերան «ուռա». գրոհի գնացող զինվորների ցնծալից ու ահավոր աղաղակ էր դա, որ ներկաների վրա անում էր միստիկ տպավորություն: Լուռ էր. լուռ լսում էին բոլորը. դեմքերի արտահայտությունն այն էր, որ, կարծես, նրանք սպասում էին թնդանոթի պայթյունի. հառել են լսողություններն ու սպասում անհամբեր՝ հիմա կպայթի:- «Կըսեն բերդեն թոփի են կապե նաչալնիկի տունը»,- արտահայտեց ընդհանուրի միտքը պ. Աբոմարշը, որ նույնպես գտնվում էր սրճարանում. բայց հավանություն չգտավ:- «Ջեւզեկ-զեւզեկ չխոսես նե, հայվան, քու ի՞նչ խառնվելու գործդ է»,- բարկացավ Հաջի Օնիկ էֆենդին ու ավելացրեց, մի փոքր լռելուց հետո, չոր ու խրատական: «Ատ սինլքորներու զուռնան ետքը կիմանանք, յավրո՛ւս»,- ու դուրս գնաց ձեռնափայտը գետին խփելով- չոր ու խրատական: Ուզում էր տուն գնալ Հաջի Մանուկոֆ էֆենդին, բայց Հաջու տան ճանապարհն ընկնում էր Հինգհարկանի Շենքի մոտով. դեռ նոր էր թեքվել դեպի այդ շենքը Հաջին, երբ ետ-ետ գնաց, զարհուրած կոթնեց պատին:- Դեմը, Հինգհարկանի Շենքի առաջ, Օնիկ էֆենդին տեսավ- զորքեր, զորքեր, զորքեր. անհաշիվ բազմություն: Դեմը- վեր ցցված սվիններ, ու վեր ցցված սվինների միջից Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը տեսավ- Հինգհարկանի Շենքի պատշգամբը. պատշգամբում տեսավ- մի քանի սոխ զինվորներ, նրանց մեջ իրան- պ. Մարուքեին, իր հորջորջած՝ «քամի կուլ տվող» Կարո Դարայանին եւ սրանց մեջտեղը- օ՜, զարհուրանք,- իրան՝ ոստիկանապետին... Գլուխը բաց էր ոստիկանապետի. Հաջի Մանուկոֆ էֆենդու նայած վայրկյանին՝ մի ինչ-որ սոխ սալդաթ պոկում էր նրա, ինչպես տեղացիք էին ասում ուսդիրներին՝ «չիները», «քամի կուլ տվողը» բռնել էր օձիքից ոստիկանապետի ու ցույց տալով ոստիկանապետի վախից ցամաքած դեմքը ներքեւում կանգնած զինվորներին՝ «քամի կուլ տվողն» ասում էր անկարելի խոսքեր: Շուռ եկավ Հաջի Օնիկ էֆենդին ճեպով- վազեց հակառակ ուղղությամբ: Դեմից, նույնքան սարսափած ու շփոթված, դեպի ինքն էր գալիս- ընկ. Վառոդյանը. ընկ. Վառոդյանի փափախը թեքվել էր մի կողմ. գենքը չկար: «Ո՞ւր, Հաջի՛»,- հարցրեց ընկ. Վառոդյանը՝ դեմքը, աղաչական, Հաջուն մոտեցնելով. «Գնա՛, գնա՛, յավրո՛ւս. ինձի հետ գործ չունիս»,- հրեց նրան մի կողմ Հաջի Օնիկ էֆենդին ու շարունակեց վազել իր վազած ուղղությամբ: Ու դեռ չէր շուռ եկել դեպի կողքի փողոցը, երբ նորից ստիպված եղավ պատին կպչել Հաջին. կողքի փողոցից շուռ եկան դեպի

ինքը ու լցրին փողոցը- զորքեր, զորքեր, զորքեր- անթիվ բազմություն.- դեպի Հինգհարկանի Շենքն էին գնում նրանք: Խառնված նրանց, այդ սոխ սալդաթներին, գնում էին նաեւ մրոտ մարդիկ, «բաշիբուզուկներ»,- ինչպես մտածեց Հաջին.- երկաթուղագծի ծառայողներն ու բանվորներն էին դրանք, որ խառնվել էին զորքին- սոխ սալդաթներին: Սարսեց, քար կտրեց տեղն ու տեղը Հաջին: Հաջին տեսավ. սոխերն ու բաշիբուզուկները, մեջ առած, տանում էին... բարձրաստիճան Սոխին. սոխ՝ զինվորներով ու բաշիբուզուկներով շրջապատված, գլխաբաց, առանց ուսդիրների, կալանավորի նման գետին նայելով, քայլում էր... բարձրաստիճան Սոխը, այսինքն՝ գավառապետը... Բնազդաբար ձեռքը գլխարկին տարավ Հաջի Օնիկ էֆենդին, երբ անցնում էր մոտից գավառապետը. բարեբախտաբար, չնայեց նրա կողմը, եւ Հաջի Օնիկ էֆենդին մի գոլ ուրախություն զգաց իր ներսում, որ չնայեց իր կողմը գավառապետը: Բայց Հաջու այդ վայրկենական ուրախությունը հաջորդ վայրկյանին տեղի տվեց մի անզուսպ բարկության, անգամ կատաղության.- գավառապետին շրջապատող սոխ զինվորների ու բաշիբուզուկների հետեւից, երգելով ու աղմկելով, գնում էին քաղաքի տկլոր երեխաները. նրանցից ոմանք գտել էին թիթեղե թեյամաններ ու զինվորական կատելոկներ, որոնց տակերին խփելով՝ նրանք անասելի աղմուկ էին բարձրացնում- վայրի երաժշտություն: Զայրույթից ու կատաղությունից Հաջի Մանուկոֆ էֆենդու ծնկներն սկսեցին դողալ. կընկներ, եթե շարժվող զինվորների պատանման հոսանքը չպահեր: Հոսանքն անցավ, շրջվեց դեպի Հինգհարկանի Շենքը. փողոցը դատարկվեց: Հանգիստ շունչ քաշեց Հաջի Մանուկոֆ էֆենդին. հետո նստեց պատահաբար անցնող «Լույսի» գրասենյակի կառքը. քիչ անց, քրտնաթոր, ինչպես բաղանիքից ելած, իր տան առջեւը իջնում էր կառքից Մանուկոֆ էֆենդին: «Ո՞ւր է աղաղ»,- հարցրեց Հաջին կառապանից՝ նրան դրամ տալով.- «Էսօր կանտոր չէ էկե, չեմ տեսե»,- պատասխանեց կառապանը. շուռ տվեց կառքը. գնաց:

Խորհրդավոր ժպիտը դեմքին, ժպիտ, որի մեջ խառը կային թե՛ զարմանք, թե՛ անսպասելի ուրախություն եւ թե՛ խորին ակնածանք,- հանդիպեց Հաջի Օնիկ էֆենդուն Հաջու ազիզ կողակիցը- Նունուֆար հանըմը. շնչասպառ, նրան հանձնեց իր ձեռնափայտը Հաջին եւ ուզում էր արդեն ընդունարանը մտնել, երբ Նունուֆար հանըմը կտրեց նրա ճանապարհը. Նունուֆար հանըմը մատները դրեց Հաջի Օնիկի շրթունքներին.- «ը՛ս՛ս՛ս՛»,- մատները Հաջու շրթունքներին

դնելով՝ խորհրդավոր ժպտաց Նունուֆար հանրմը. «յա՛վաշ, հերիֆ, ներսը մարթ կա...»: «Վո՞վ կա»,- չոր, ցցվեց էֆենդին՝ դեմքին վախ ու սարսափ. ու չհամբերեց,- դեպի իրեն քաշեց դուռը... ու մնաց քարացած: Հյուրասենյակում նստած էին- երեւակայո՞ւմ եք- Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ,- Հաջու համար ամենազարմանալին ու ամենաանսպասելին,- քաղաքի պարետը (բարձրահասակ սպան)... «Է, շա՞տ պիտի երկարի սա սարսաղությունը»,- ներս մտնելով հարց տվեց Հաջին՝ հերթով նայելով Համո Համբարձումովիչի, բժշկի եւ բարձրահասակ սպայի (քաղաքի պարետի) դեմքերին. բայց Համո Համբարձումովիչի, բժշկի եւ քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) դեմքերն անպատասխան թողին Հաջի Մանուկոֆ էֆենդու հարցմունքը: «Է՛, էրթա՛նք, էրթա՛նք մեյմեկ թաս օղի առնենք»,- ավելացրեց Հաջին՝ ընդհանուր շփոթմունքը ցրելու ցանկությամբ: Ու մտան ճաշասենյակ:

Ճաշասեղանի ամենավերի գլուխը, Հաջի Օնիկ էֆենդու կողքին նստած, լուռ ճաշում էր Մազութի Համոն: Մազութի Համոն ուտում էր պաղ, ջրանման, կանաչավուն «չորբա»: Ուտելով՝ Համո Համբարձումովիչը նայում էր պնակին. բայց Համո Համբարձումովիչի աչքերը կարծես չէին տեսնում կանաչավուն չորբան. պնակում, չորբայի փոխարեն,- մշուշ էր. անգո մի մշուշ- բաց տարածություն: Հասկանում էր Համո Համբարձումովիչը, զգում էր.- այն, որ կատարվում էր դուրսը- կատարվում էր իրենից դուրս. կատարվում էր- իրենից անկախ: Սպասում էր՝ ի՞նչ կլինի: Մտածում էր՝ ինչո՞վ կվերջանա: Ու պատասխան չէր գտնում իր այդ հարցմունքին Մազութի Համոն. ուղեղում- մշուշ էր. անգո մի մշուշ- բաց տարածություն...

Արդեն վերջացրել էին ճաշը, երբ եկավ ընկ. Վառոդյանը: Ընկ. Վառոդյանը ներս ընկավ շնչասպառ: Եվ ահա Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆի համար, իր իսկ բնակարանում, պատահեց չտեսնված մի բան. Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ ընկ. Վառոդյանը խնդրեցին Հաջուն, որ նա թույլ տա իրենց առանձնանալ հարեւան սենյակը: Հաջին, իհարկե, թույլ տվեց, թեկուզ եւ ո՛չ առանց զարմանքի, որ իր իսկ բնակարանում հյուրերն ուզում են ազատվել իրենից: Բայց եւ այնպես- «ընելիքդ ի՞նչ, Հաջի՛. ընկեր ես- պիտի քաշես»,- մտածեց Հաջին ու առաջնորդեց հյուրերին հարեւան սենյակը: Մտան հարեւան սենյակը Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ ընկ. Վառոդյանը. Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ ընկեր

Վառոդյանը փակվեցին հարեւան սենյակում: Իսկ Հաշին մնաց քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ ճաշասենյակում. նաիրախառն ռուսերենով սկսեց զրուցել քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ օրվա անցուդարձի մասին: Խոսում էր Հաշին քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ, բայց միտքն այնտեղ էր- հարեւան սենյակում: Հասկանում էր Հաշին. գիտեր. այդ վայրկյանին հարեւան սենյակում նիստ էր Տեղական Կոմիտեի: Գիտեր, բայց չէր հասկանում Հաշին, որ այդ վայրկյանից պատմական վայր էր արդեն իր, Հաշի Օնիկ էֆենդի Մանուկոֆի բնակարանը. որ այդ վայրկյանին իր, Հաշի Օնիկ էֆենդի Մանուկոֆի բնակարանում, հարեւան սենյակում, կատարվում էին, ինչպես իր, այնպես էլ ամբողջ նաիրյան ցեղի համար- ճակատագրական անցքեր:- Այդ վայրկյանին Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ ընկ. Վառոդյանը, այսինքն՝ Կենտրոնաուղեղասարդի Տեղական Կոմիտեն, այսինքն՝ նաիրյան տիեզերական հոգու Տեղական Սուբստանցիան իր դիրքն էր որոշում դեպի կատարվող դեպքերը, եւ այս տիեզերական հանգամանքը չէր ըմբռնում Հաշին. Հաշին չէր հասկանում այս տիեզերական դեպքի ամբողջ նշանակությունը: Թե ի՞նչ որոշում հանեցին կատարվող դեպքերի մասին Համո Համբարձումովիչը, բժիշկը եւ ընկ. Վառոդյանը հարեւան սենյակում- Հաշի Մանուկոֆ էֆենդին, իհարկե, չիմացավ եւ չէր էլ կարող իմանալ. բայց շուտով նա պիտի իմանար, եւ պիտի իմանար նաեւ այն, թե ի՛նչ բարի պատեհություն էր իր համար այդ թանկագին հյուրերի այդ օրն իր մոտ գալը: Եվ այս ամենը Հաշին պիտի իմանար ընդամենը մի շաբաթ անց, երբ բժիշկ Սերգե Կասպարիչը շրջանային կոմիսար էր արդեն, իսկ Համո Համբարձումովիչը- Քաղաքային Խորհրդի նախագահ...

Տարօրինակ, մութ, չհասկացված դեպքեր պատահեցին նաիրյան այդ քաղաքում այդ շաբաթվա ընթացքում: Դեպքեր, որոնք ծածկված են գաղտնիքի ու խորհրդավորության անթափանցելի քողով- եւ դժվար թե որեւէ մեկին երբեւիցե հաջողվի վեր հանել այդ քողը եւ նայել կատարված դեպքերի իսկական աստառին: Այնպես որ, այստեղ մենք պիտի խուսափենք զանազան ենթադրություններ անելուց ու եզրակացություններ հանելուց. պիտի պատմենք լոկ այն, ինչ որ մեզ հաջողվել է տեսնել սեփական աչքերով կամ լսել մարդկանցից, որոնք մեր աչքին ունեն ճշմարտախոսի անկաշառ կերպարանք:- Անցնենք այդ դեպքերին: